ցաւ, ներս մտաւ մի աղջիկ, որ ձեռքով երկու կողմից բռնած, բերում էր մի մեծ պղնձէ սինի, որի վրայ դրած էին՝ լաւաշ, պանիր, եղջերոի սառը միս, մածուն, կարագ եւ լեռնային զանազան բանջարներ: Նա լուռ մօտեցաւ, դրեց սինին հիւրերի առջեւ եւ նոյնպէս լռութեամբ հեռացաւ, առանց աչքերը այս կողմ կամ այն կողմ դարձնելու: Տղերքը բարեւեցին նրան մի քանի սրախօսութիւններով, բայց նա ոչ մէկին չպատասխանեց:

Նա Մարօն էր:

Ամբողջ տասներկու տարի էր, որ չէի տեսել նրան: Որքա՜ն մեծացել էր նա, որպիսի՜ ծանր կերպարանք էր ստացել այն մշտազարթ, պայծառ դէմքը, որից մանկական ժպիտը երբեք պակաս չէր լինում: Տարիները փոխել էին նրան, փոխել էն դէպի աւելի գեղեցիկը եւ աւելի սքանչելին: Մարօն կրկին վերադարձաւ. այս անգամ բերեց մի ահագին խեցեղէն ամանով գինի: Նրա աչքերը հանդիպեցան իմ աչքերին եւ խաղաղ դէմքի վրայ երեւաց խռովութեան նման մի բան: Նա իսկոյն դուրս վազեց, երեւի, հօրը իմացում տալու իմ մասին:

Իմ ընկերները դեռ ինձ «մարդի» տեղ չէին դնում եւ այս պատճառով նրանցից ոչ մէկը չմտածեց ներկայացնել ինձ: Իսկ որսորդը այն աստիճան զբաղուած էր իր հիւրերով, որ կամ չնկատեց ինձ, կամ տեսաւ եւ չճանաչեց: Վերջինը աւելի հաւանական էր:

— Ու՞ր է, — ձայն տուեց նա, շփոթուած ներս մտնելով: — Ու՞ր է Ֆարհատը:

Ես մօտեցայ նրան:

— Ֆարհատ ջան, դո՞ւն ես, քո հոգուն մատաղ, — բացականչեց նա ինձ գրկելով, եւ ուրախութեան արտասուքը ցօղուեցաւ ալեխառն մօրուքի վրայ: — Տղա՜ս, աստծու աչքը վրադ լինի, որքա՜ն մեծացել ես դու... ի՞նչ շնորհալի տղայ ես դարձել... Կարօ, որտեղի՞ց գտար դրան: Ես չէի ճանաչելու, եթէ Մարօն չասէր:

Կարօն կարճ կերպով պատմեց, թէ որտեղ եւ ինչ դրութեան մէջ գտաւ ինձ: Որսորդը սկսեց ծիծաղել:

— Ես այդ սպասում էի, որ դու կը փախչես այն անպիտանի մօտից, — ասաց նա, — բայց ափսո՜ս, որ երկար մնացիր այն «դժոխքի» մէջ:

Դժոխք կոչում էր որսորդը տէր Թոդիկի դպրոցին: Այդ խօսքը կրկին յիշեցրեց ինձ վաղեմի տանջանքները, որ առժամանակ մոռացութեան էի տուել: